ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
գ. Արաքսավան , 0722, Պ.Սևակի 21 , araksavanhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

„ 07" օգոստոսի 2013 թ N. 09

ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն "Նվազագույն աշխատավարձի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013թ. հունիսի 27-ի թիվ 661-Ն որոշման 7-րդ հավելվածի, Արաքսավան համայնքին "Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին" հոդվածով հատկացվել է 260.0 հազար դրամ գումար, որի հետ կապված՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

2013 թվականի բյուջեի եկամտային մասին ավելացնել 260.0 հազար դրամ գումար՝ որպես հատկացումներ պետական բյուջեից /սուբվենցիա/:
Բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
ա/ հատկացված սուբվենցիայի 260.0 հազար դրամից 220.0 /երկու հարյուր քսան հազար/ դրամը ավելացնել 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ դասակարգման 4111 հոդվածին, իսկ 40.0 /քառասուն հազար/ դրամը ավելացնել 05.01.01.51 /սանիտարական մաքրում/ դասակարգման 4213 հոդվածին:
բ/ 11.01.02.51 /պահուստային ֆոնդ/ գործառական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 300.0 /երեք հարյուր հազար/ դրամ պակասեցնել և հատկացնել՝
- 07.02.01.51 մասնագիտացված բժշկական ծառայություններ գործառական դասակարգման 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածին 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամ՝ որպես ֆինանսական աջակցություն Դիմիտրովի բուժ. ամբուլատորիային :
- 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ դասակարգման 4252 հոդվածին ավելացնել 200.0 /երկու հարյու հազար/ դրամ՝ որպես ծառայողական ավտոմեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր:
գ/ 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ դասակարգման 5113 հոդվածից 180.0 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ պակասեցնել և հատկացնել նույն դասակարգման 5122 հոդվածին՝ որպես վարչական սարքավորումների գնման նպատակով ծախսեր:

Ավագանու անդամներ
1. Գրիշա Մարգարյան
2. Արա Պողոտանյան
3. Հակոբ Օհանյան
4. Անահիտ Ղուկասյան
5. Գրիգոր Խաչատուր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ